



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻԶՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան, /0235/6-00-48, mkhchyan1@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 օգոստոսի 2013թվականի N 17

**ՄԻԶՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ.-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ**

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ կետի պահանջներով

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է**


Հաստատել Մխչյան համայնքի 2013-2016 թթ.-ի զարգացման քառամյա ծրագիրը համաձայն  
հավելվածի

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՄԱՐԳԻՍ 

2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ 

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ 

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ 

5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ 

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**ԽԱԶԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**



### 3. Համայնքի՝ ըստ առանձին ոլորտների առաջնահերթ նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

#### Ծրագիր 1.

##### Համայնքի ոռոգման համակարգի բարելավում

##### Ծրագրի հիմնավորումը

Համայնքի՝ գյուղատնտեսական նշանակության հողատարածքների զգալի հատված(մոտ 250 հա) չի մշակվում ոռոգման ցանցի բացակայության կամ ֆիզիկական մաշվածության պատճառով: Շատ հատվածներում ջուրը գյուղացու հողատարածք է հասնում հողային հունով առուներով, ինչը ոռոգման շրջանում հանգեցնում է ջրի և ժամանակի զգալի կորստի: Այդ պատճառով անհրաժեշտ է անցկացնել ոռոգման նոր ցանց, որպեսզի ապահովվի հողոգտագործողների ոռոգման ջրի պահանջարկը:

##### Ծրագրի նպատակները

- Մշակելի դարձնել ոռոգման համակարգի թերի լինելու կամ բացակայության պատճառով չմշակվող հողատարածքները
- Ավելացնել համայնքի բնակիչների եկամուտները, ինչը կհանգեցնի կենսամակարդակի բարձրացմանը
- Նվազեցնել արտագաղթը համայնքից
- Ապահովել հողերն անապատացման վտանգից

##### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2015թ. հունվարի 1-ն անցկացնել 1,5 կմ ոռոգման ջրագիծ(կիսախողովակներ)
- Մինչև 2016թ. հունիսի 1-ը մոտ 100 հա հողատարածք ապահովել ոռոգման ջրով
- Մինչև 2016թ. հունիսի 1-ը նշված հողակտորներում 30%-ով բարձրացնել բերքատվությունը

## Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	2013թ. մարտ – 2013թ. մայիս	Համայնքի ղեկավարի աշխատակազմ
Ֆինանսական վերլուծություն	2013թ. հունիս - 2013թ. հուլիս	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	2013թ. օգոստոս -2013թ. սեպտեմբեր	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	2013թ. հոկտեմբեր - 2014թ. հոկտեմբեր	Կոմունալ հարցերի մասնագետ, գյուղմասնագետ
Ծրագրի արդյունքների գնահատում	2014թ. նոյեմբեր - 2014թ. դեկտեմբեր	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ

## Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 60000000(վաթսուն միլիոն) ՀՀ դրամ:

## Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծրագրի հաջող իրականացման դեպքում համայնքի՝ մոտ 100 հա հողատարածք կունենա կանոնավոր ջրամատակարարում, ինչը դրական ազդեցություն կունենա համայնքի բնակիչների կենսամակարդակի վրա:

## Ծրագիր 2

### Արտաքին լուսավորության ցանցի անցկացում

#### Ծրագրի հիմնավորումը

Միջանի համայնքապետարանի աշխատակազմի վերլուծությունները ցույց են տվել, որ Միջան-Արևշատ միջհամայնքային ճանապարհի՝ Միջան համայնքի վարչական տարածքում գտնվող հատվածում(Ալավերդյան փողոցի առաջին հատված, Մենդելեն փողոց) բազմաթիվ ճանապարհատրանսպորտային պատահարներ են տեղի ունենում՝ հիմնականում գիշերային արտաքին լուսավորության բացակայության պատճառով: Այդ հատվածում գիշերային արտաքին լուսավորության բացակայությունը նաև խոչնդոտ է հանդիսանում գիշերային ժամերին համայնքի բնակիչների անվտանգ տեղաշարժին, ինչից էլնելով անհրաժեշտություն է առաջանում նշված ճանապարհահատվածում անցկացնել գիշերային արտաքին լուսավորություն:

#### Ծրագրի նպատակները

- Առավել անվտանգ դարձնել համայնքի բնակիչների կյանքը
- Նշված ճանապարհով իրականացվող երթևեկությունը ապահովել անկանխատեսելի վթարներից
- Համայնքը դարձնել ավելի գեղեցիկ և լուսավոր

#### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2014թ. հունիսի 1-ը գիշերային արտաքին լուսավորությամբ ապահովել համայնքի Մենդելեն փողոցն ամբողջությամբ(մոտ 700 մ) և Ալավերդյան փողոցի սկզբնական հատվածը(մոտ 300 մ)
- Մինչև 2015թ. հունվարի 1-ը հասնել այն արդյունքին, որ բացառվեն գիշերային արտաքին լուսավորության բացակայության պատճառով առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարները

## Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	15 նոյեմբեր 2012- 30 նոյեմբեր 2012	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ
Ֆինանսական վերլուծություն	01դեկտեմբեր 2012 – 15 դեկտեմբեր 2012	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	20 դեկտեմբեր 2012 – 25 դեկտեմբեր 2012	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	Մարտ 2013 - նոյեմբեր 2013	Կոմունալ հարցերի մասնագետ
Ծրագրի արդյունքների գնահատում	Հունվար 2014 - մարտ 2014	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ

## Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 4000000(չորս միլիոն) ՀՀ դրամ:

## Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծրագրի հաջող իրականացման դեպքում գիշերային արտաքին լուսավորությամբ կապահովվի Մխչյան –Արևշատ միջհամայնքային ճանապարհի՝ Մխչյան համայնքի հատվածը և կդառնա առավել անվտանգ և գերժ վրթարներից

## Ծրագիր 3

### Համայնքի փողոցների բարեկարգում

#### Ծրագրի հիմնավորումը

Համայնքի փողոցների մեծ մասը գտնվում են անբարեկարգ վիճակում, ինչը բնակիչների շրջանում դժգոհություններ է առաջացնում: Փողոցների անհարթ լինելը հատկապես մտահոգում է ավտոմեքենա ունեցող բնակիչներին, քանի որ դրանք պատճառ են հանդիսանում մեքենաների հաճախակի անսարքությունների: Այդ պատճառով՝ փողոցների բարեկարգումն անհրաժեշտություն է համայնքի համար:

#### Ծրագրի նպատակները

- Համայնքը բնակիչների համար դարձնել ավելի բարեկեցիկ և հարմարավետ
- Բարձրացնել համայնքի գրավչության մակարդակը

#### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2016թ. հունիսի 1-ը հարթեցնել և(կամ) խճապատել համայնքի փողոցների 70%-ը
- Մինչև 2016թ. հունիսի 1-ը նվազեցնել ավտոմեքենաների՝ համայնքի փողոցների անհարթությունների պատճառով առաջացած անսարքությունները 50%-ով

#### Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	15 նոյեմբեր 2012- 30 նոյեմբեր 2012	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ
Ֆինանսական վերլուծություն	01դեկտեմբեր 2012 – 15 դեկտեմբեր 2012	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	20 դեկտեմբեր 2012 – 25 դեկտեմբեր 2012	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	Մարտ 2013 - մայիս 2016	Կոմունալ հարցերի մասնագետ, գյուղմասնագետ
Ծրագրի արդյունքների գնահատում	Հունիս 2016 – հուլիս 2016	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ

## Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 8000000(ութ  
միլլիոն) ՀՀ դրամ:

## Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծրագրի հաջող իրականացման դեպքում համայնքի փողոցները կդառնան առավել  
բարեկարգ, իսկ համայնքը կլինի ավելի գրավիչ:

## Ծրագիր 4

### Համայնքի մանկապարտեզ տանող ճանապարհահատվածի ասֆալտապատում

#### Ծրագրի հիմնավորումը

Տարիներ շարունակ Մխչյանի մանկապարտեզ տանող ճանապարհը եղել է անբարեկարգ վիճակում, հատկապես աշնան և ձմռան ժամանակահատվածում դժվարանցանելի է այդ ճանապարհահատվածը, ինչը դժգոհություն է առաջացնում մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողների մոտ: Համայնքապետարանն այդ խնդրի լուծումը տեսնում է ոչ միայն ճանապարհը հարթեցնելը, այլ ամբողջովին կապիտալ նորոգումն ու ասֆալտապատումը:

#### Ծրագրի նպատակները

- Համայնքը բնակիչների համար դարձնել առավել բարեկցիկ և հարմարավետ
- Բարձրացնել համայնքի արտաքին գրավչությունը

#### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2015թ. հունվարի 1-ը բարեկարգել և ասֆալտապատել Մխչյանի մանկապարտեզ տանող ճանապարհահատվածը(Աճառյան փողոցի՝ Արտաշատյան խճուղու և Ստեփանյան փողոցի միջև ընկած հատվածը, Ստեփանյան փողոցի՝ Աճառյան փողոցի Գրիբոյեդով փողոցի միջև ընկած հատվածը, Գրիբոյեդով փողոցի՝ Արտաշատյան խճուղու և Ստեփանյան փողոցի միջև ընկած հատվածը(մոտ 500մ))



## Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	15 հունվար 2014- 30 հունվար 2014	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ
Ֆինանսական վերլուծություն	01 փետվար 2014 – 15 փետրվար 2014	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	01 մարտ 2014 – 15 մարտ 2014	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	Ապրիլ 2014 - նոյեմբեր 2014	Կոմունալ հարցերի մասնագետ, գյուղմասնագետ
Ծրագրի արդյունքների գնահատում	Դեկտեմբեր 2014	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ

### Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 48000000(քառասունութ միլիոն) ՀՀ դրամ:

### Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծրագրի հաջող իրականացման դեպքում համայնքի՝ մանկապարտեզ տանող փողոցները կդառնան առավել բարեկարգ, իսկ համայնքը կլինի ավելի գրավիչ:

## Ծրագիր 5

### Մշակույթի տան բեմի կահավորում

#### Ծրագրի հիմնավորում

Միջյան համայնքի մշակույթի տունը եզակի ճարտարապետական կառույց է, որն իր մեծ դերն ու նշանակությունն ունի համայնքի պատմության մեջ: Սակայն մշակույթի տունը իր շունչն ու ոգին ստանում է, երբ գործում է լիարժեք: Նախորդ տարիներին կատարվել են մշակույթի տան վերանորոգման մեծածավալ աշխատանքներ, տեղադրվել են աուդիոտեխնիկական սարքավորումներ, սակայն դեռևս բացակայում են բեմի կահավորոնքը(վարագույր, դեկորներ և այլն) և լուսային սարքավորումները: Որպեսզի մշակույթի տունը լիարժեք գործի, անհրաժեշտ է հազեցնել վերոնշյալ կահավորումով և սարքավորումներով:

#### Ծրագրի նպատակները

- Բարելավել համայնքի բնակիչների սոցիալ-մշակութային կյանքը
- Մեծացնել բնակիչների հետաքրքրությունը արվեստի ճյուղերի նկատմամբ
- Համայնքը դարձնել առավել գրավիչ

#### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2016թ. հունիսի մեկը ավելացնել մշակույթի տուն հաճախողների թիվը 70%-ով
- Մինչև 2016թ. հունվարի մեկը մշակույթի տանն անցկացել տարեկան 25 միջոցառում

## Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	15 հունվար 2014- 30 հունվար 2014	Համայնքի ղեկավար, Մշակույթի տան տնօրեն
Ֆինանսական վերլուծություն	01փետվար 2014 – 15 փետրվար 2014	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	01մարտ 2014 – 15 մարտ 2014	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	Ապրիլ 2014 - նոյեմբեր 2014	Մշակույթի տան տնօրեն, գեղմասվար
Ծրագրի արդյունքների գնահատում	Դեկտեմբեր 2014	Համայնքի ղեկավար, Մշակույթի տան տնօրեն

### Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 20000000(քսան միլիոն) ՀՀ դրամ:

### Ծրագրից ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման դեպքում համայնքում կաշխուժանա մշակութային կյանքը, ինչը կբարձրացնի համայնքի բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարվածության մակարդակը:

## Ծրագիր 6

### Հայրենական մեծ պատերազմի հուշակոթողի տարածքի բարեկարգում և կանաչապատում

#### Ծրագրի հիմնավորում

Հայրենական մեծ պատերազմի հուշակոթողի տարածքը, չնայած կատարված աշխատանքներին, դեռևս ունի բարեկարգման կարիք. տարածքում չկան ծառեր, որոնց շուքի ներքո կարող են իրենց հանգիստը վայելել համայնքի բնակիչները, բացակայում են նաև նստարաններ: Այդ պատճառով տարածքը ամբողջական և համալիր բարեկարգում է պահանջում որպես հանգստի գոտի, ինչը գտնվում է համայնքապետարանի ուշադրության ներքո

#### Ծրագրի նպատակները

- Բարձրացնել համայնքի բնակչության սոցիալական պահանջմունքների բավարարվածության մակարդակը
- Համայնքը դարձնել առավել գրավիչ
- Ապահովել համայնքի բնակիչների հանգիստը
- Համայնքի երիտասարդների մեջ սերմանել հայրենասիրություն՝ պարբերաբար հիշատակի տուրք մատուցելով Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին

#### Ծրագրի խնդիրները

- Մինչև 2016թ. հունիսի 1-ը Հայրենական մեծ պատերազմի հուշակոթողի տարածքը դարձնել հանգստի գոտի, որտեղ կարող է իր հանգիստը վայելել համայնքի բնակչության 60%-ը

## Ծրագրի ժամանակացույցը և պատասխանատու մարմինները

Գործողություններ(քայլեր)	Ժամանակացույց	Պատասխանատու
Իրավիճակի գնահատում	15 հունվար 2015- 30 հունվար 2015	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ
Ֆինանսական վերլուծություն	01 փետվար 2015 – 15 փետրվար 2015	Համայնքի ղեկավար, գլխավոր հաշվապահ
Ներկայացում ավագանու հաստատմանը	01 մարտ 2015 – 15 մարտ 2015	Համայնքի ղեկավար
Ծրագրի իրականացում	Ապրիլ 2015 - Ապրիլ 2016	Կոմունալ հարցերի մասնագետ
Ծրագրի արդյունքների գնահատում	Մայիս 2016	Համայնքի ղեկավար, Համայնքի ղեկավարի աշխատակազմ

### Ծրագրի ֆինանսական գնահատումը

Նախնական մոտավոր հաշվարկներով ծրագրի արժեքը կազմում է 2000000(երկու միլիոն) ՀՀ դրամ:



ՄԱՍՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԽԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք  
ՀՀ, Արարատի մարզ, գ. Մխչյան, /0235/6-00-48, mkhchyan1@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 օգոստոսի 2013թվականի N 19

**ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013Թ.-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Մխչյան համայնքի ավագանու 18.05.2013թ.-ի թիվ 12 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

<<Զիջել քաղաքացիների գույքահարկը համապատասխանաբար. Գրիգորյան Արմեն- 22320 /քսաներկու հազար երեք հարյուր քսան/ դրամ>> թողնել անփոփոխ իսկ որոշման մնացած մասը հանել:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐԱՅԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

5. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԽԱԶԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

